

մասին այստեղ գրուածները բոլորովն սխալ են ժամանակագրորէն. ինչպէս նաեւ յիշուած «1751» եւ «1756» թուականները, ինչպէս քիչ ետքը կը տեսնենք:

Երբ Էջմիածնի Յակոբ Ե. Շամախեցի կաթողիկոսն (1759—1763 Մարտ 21 †) վախճանեցաւ, Բասենցի Յարութիւն Արքեպ. կաթողիկոսական ընտրելի կը նկատուէր, եւ Էջմիածին գումարուած ժողովին մէջ գտնուելով՝ ինք առաջարկեց ընտրել Սիմէոն Վ. Երեւանցին, որ եւ ընտրեցաւ (Չամչեան, Գ. 871 2): Սիմէոն կաթողիկոս նոյն 1763 տարին Հոկտ.ին Կ.Պոլիս զրկեց զՅարութիւն Արքեպ. իրրեւ նուիրակ, որ ճամբան թղթերը գողցուելուն պատճառաւ Եւգոնկիա շատ սպասած էր (Աղանեանց, անդ. էջ 6—10): 1763ին վերջն արդէն Կ.Պոլիս հասած էր եւ նուիրակութիւն սկսած Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցիէն (Սարգիս Դպիր, ձեռագիր): Կ.Պոլիս Նալեան Յակոբ Պատրիարք՝ իր մահուանէն († 19 Յուլ. 1764) յառաջ, անոր յանձնեց իր սեպհական եկեղեցական սպասներէն մաս մը իրրեւ նուէր Էջմիածնի (Ընդ. Օր. էջ 144): Բասենցի՝ Նալեանի թաղման ալ ներկայ գտնուեցաւ, ինչպէս վերն յիշեցինք: Սիմէոնի եւ Յարութիւնի յարաբերութիւնները հետզհետէ ձգտելով (Աղանեանց, անդ. էջ 750—1), 1767ին իրեն տեղ Էջմիածնի նուիրակ եկաւ Զաքարիա Եպ. Կաղզուանցի Փօքուղեան, որով Յարութիւն Արքեպ. Պոլիս անպաշտօն մնաց: